ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/31084-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-608-31.05.2023-ԱռՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 895-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-608-31.05.2023-Առ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումներն առաջարկվում է նախատեսել առանձին հոդվածի տեսքով, որտեղ կամրագրվեն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակները, այն վայրերը, որտեղ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելված է՝ կարգավորելով նաև նույն ծառայությունների շարժական տեսակի մատուցման դեպքերը:

Միաժամանակ անհրաժեշտ է նախագծում բացառություն նախատեսել այն դեպքերի համար, երբ պացիենտը հրաժարվում է տեսալուսանկարահանող սարքերի կիրառմամբ բժշկական օգնություն ստանալուց, այլապես այն կդիտարկվի հակասահմանադրական:

Առաջարկվում է նաև նախագծում ամրագրել դրույթ, որի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսանելի վայրում կտեղադրվի իրազեկման նշան տեսալուսանկարահանող սարքեր օգտագործվելու դեպքում՝ հստակ նշելով, թե այն որտեղ է տեղադրվելու, բժշկական կազմակերպության, թե բժշկական օգնության և սպասարկման տրամադրման կաբինետի մուտքերի մոտ: Վերջին դեպքում նախագծում առաջարկվում է ամրագրել, որ տեսալուսանկարահանող սարքերի կիրառմամբ ստացված տվյալները բժշկական գաղտնիք են համարվում:

Առաջարկվում է դրույթներ նախատեսել նաև տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ձեռք բերված տվյալները պահպանելու, ժամկետների, ինչպես նաև այդ տվյալները երրորդ անձանց տրամադրելու վերաբերյալ: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տվյալները հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են՝ առաջարկվում է սահմանել նաև կարգ այդ տվյալները պահպանելու վերաբերյալ՝

հստակեցնելով, որ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ձեռք բերված տեսանյութերը պահպանվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակներով պայմանավորված:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47[1]-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում՝

առաջացնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ տեղադրված յուրաքանչյուր տեսալուսանկարահանող սարքի դեպքում, սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 895 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-608-31.05.2023-ԱոՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 7-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7. 1-ին հոդվածով.

<<Հոդված 7. 1. **Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում**

1. Հասարակական կարգի պահպանման, ուսումնական և գիտական, պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ինչպես նաև պացիենտների այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակներով բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում կարող են օգտագործվել տեսալուսանկարահանող սարքեր:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելվում է:

3. Տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները տեսանելի վայրում տեղադրում են համապատասխան նախազգուշական նշան: Համապատասխան նախազգուշական նշանը տեղադրվում է այնպես, որ տեսանելի լինի մինչև տեսահսկման տարածք մտնելը:

4. Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալները կարող են պահպանվել, եթե դրանք հետապնդում են սույն հոդվածի 1-ին մասով ամրագրված նպատակները:

5. Եթե հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տեսանյութերը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության (այդ թվում՝ բողոքարկման վարույթի) կամ ծառայողական քննության ավարտը, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու դեպքում տեսանյութերը պահվում են առնվազն մեկ ամիս, բայց ոչ ավելի, քան վեց ամիս:

6. Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման արդյունքում ստացված տվյալները տրամադրվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:>>:

Հոդված 2 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-608[1]-31.05.2023-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 47[1].-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում՝

առաջացնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ տեղադրված յուրաքանչյուր տեսալուսանկարահանող սարքի դեպքում, սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, անհրաժեշտությունից: Ներկայումս, բժշկական օգնություն և սապասարկում իրականացնող կազմակերպություններում օգտագործվում են տեսալուսանկարահանող սարքեր, սակայն դրանց օգտագործման մեխանիզմները կարգավորված և կանոնակարգված չեն: Այսինքն, այդ սարքերի տեղադրումը օրենքով արգելված չէ, սակայն դրա կիրառումը, որոշակի դեպքերում, առաջացնում է **անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի** հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների պահպանմանը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի տեսանկյունից, իր նախադեպային որոշումներով արձանագրել է հետևյալը. «Անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և տրամադրումը իրավական համակարգերի առանցքային սկզբունք է: Այն խիստ կարևոր է, ոչ միայն պացիենտների անձնական կյանքը հարգելու, այլև առհասարակ բժշկի մասնագիտության և առողջապահական ծառայությունների նկատմամբ

նրանց վստահությունը պահպանելու համար: Առանց նման պաշտպանության, բժշկական օգնության կարիք ունեցող անձինք կարող են մտավախություններ ունենալ պատշաճ բուժման նշանակման համար անհրաժեշտ անձնական և ինտիմ բնույթի տեղեկություններ ներկայացնելու և նույնիսկ բժշկին դիմելու հարցում: Այդկերպ նրանք կարող են վտանգել սեփական, իսկ վարակիչ հիվանդությունների դեպքում՝ նույնիսկ հանրային առողջությունը: Հետևաբար, ներպետական օրենսդրությամբ պետք է պատշաճ երաշխիքներ սահմանվեն և կանոնակարգվեն՝ առողջությանը վերաբերող անձնական տվյալների ցանկացած փոխանցման կամ բացահայտման դեպքերը:

Պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանման սարքերի օգտագործումը ինքնին չի հանդիսանում Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ **տեսալուսանկարահանմամբ սահմանափակվում է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝** անհրաժեշտ է սահմանափակումները սահմանել և նախատեսել օրենքով:

Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ ներկայումս առկա կարգավորումները հնարավորություն չեն տալիս լիարժեք գնահատել պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանման սարքերի օգտագործմամբ անձի **մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի** սահմափակման իրավաչափությունը: Հաշվի առնելով այն, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը ենթադրում է մարդու իրավունքների միջամտության բարձր աստիճան, առաջարկում ենք օրենքով ամրագրել որոշ նվազագույն երաշխիքներ:

Այսպես, օրինակ՝ առաջարկում ենք օրենքով կարգավորել, հասարակական կարգի պահպանման, ուսումնական և գիտական, պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ինչպես նաև պացիենտների այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակներով բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում կարող է օգտագործվել տեսալուսանկարահանող սարքեր:

Օրենքով նաև անհրաժեշտ է արձանագրել, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում տեսալուսանկարահանման սարքերի օգտագործումն արգելվում է: Հանրային տարածքներում անձը կարող է ունենալ տեսալուսանկարահանվելու ողջամիտ ակնկալիք, սակայն ավելի մասնավոր տարածքներում ինչպիսիք են օրինակ՝ ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբիներտներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում, անձն ունի իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման իրավունք:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումներով նախատեսվում է օրենքով ամրագրել տեսալուսանկարահանման սարքերի օգտագործման նվազագույն երաշխիքներ և պայմաններ՝ բացառելով բնակչության բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների

սենյակներում հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը:

Հարկ ենք համարում նաև սահմանել վարչական տուգանք այդ տարածքներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման յուրաքանչյուր դեպքի համար:

2. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք** Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից: